ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

Արվեստի վաստ. գործիչ Ս. Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

1

Մեր ժողովրդի երաժշտական մշակույթի պատմության մեջ հազիվ թե գտնվի մեկ ուրիշը, որն ունենա այնպիսի մեծ երախտիք, ինչպիսին ունի Կոմիտասը։

Կոմիտասը հայ դասական երաժշտության նահապետն է, որը դարերի խորքից մեզ հասած ժողովրդական ստեղծագործությանը տվեց արդիական նոր հնչեղություն, բարձրարվեստ ու պրոֆեսիոնալ խոր հագեցվածություն։

Բազմադարյան հայ երաժշտության պատմության մեջ ժողովրդի խառնվածքը, նրա ոգին ու բնավորությունը, իր գոյության համար մղած դարավոր պայքարը, նրա ողբերգությունը և կենսահաստատ լավատեսությունը՝ երաժշտա-հնչյունային պատկերների միջոցով, իրենց ամենից ավելի բազմակողմանի և խոր արտացոլումն են գտել Կոմիտասի ստեղծագործություններում։

Կոմիտասի գործունեությունն ընդգրկում է XIX դարի 90-ական թթ. մինչև XX դարի մոտ երկու տասնամյակները։ Պատմական այդ կարճ ժամանակահատվածում նա ծավալեց ստեղծագործական, գիտա-հրապարակախոսական և կուլտուր-լուսավորական բեղմնավոր գործունեություն՝ կյանքի կոչելով մեր ժողովրդի դարավոր երաժշտական մշակույթի, մասնավորապես երգարվեստի արժեքավոր նմուշները։ Հայտնի է, որ անցյալ դարի վերջից արդեն թե Արևելյան և թե Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում, ինչպես նաև հայ գաղթօջախներում, սկսվում է մի անօրինակ շարժում, առանձին եռանդուն կերպով հավաքվում, գրի առնվում և ուսումնասիրվում՝ են ժողովրդական բանահյուսությունը, գավառաբարբառները, ժողովրդական մեղեդիները, տաղերը, գյուղական, գուսանական և աշուղական երգերը, ձայնագրվում են շարականները և կազմվում են զանազան երգարաններ։ Հավաքված ու գրի առնված ժողովրդական երգերն ու պարեղանակները ժամանակի ոգուն համապատասխան մշակելով, աստիճանաբար լայն տարածում են գտնում հայկական դպրոցներում և հասարակության տարբեր խավերի շրջանում։

XIX դարի վերջին քառորդում Արևելյան Հայաստանում գործող մի շարք կոմպոզիտորներ ու երաժշտական գործիչներ՝ Մ. Եկմալյանը, Ք. Կարա-Մուրզան, Ն. Տիգրանյանը և ուրիշներ իրենց եռանդուն ջանքերով ու ստեղծագործություններով խթանեցին ժողովրդական բազմաձայն երաժշտության զարգացումը, պարարտ հող ստեղծելով նրա հետագա առաջընթացի համար։

Համաշխարհային և ռուսական դասական երաժշտության հարուստ փորձի ու ավանդների հիման վրա՝ ելակետ ունենալով հայ երաժշտական կուլտուրայի զարգացման այդ շրջանի ստեղծագործական առանձնահատկությունները, ժամանակի ոգին ու պահանջները՝ Կոմիտասը մեր երաժշտությունը տարավ ուրույն ճանապարհով, այն հասցնելով մի նոր, ավելի բարձր աստիճանի։

Կոմիտասի բազմաբովանդակ ու բեղուն գործունեությամբ հայ երաժշտության զարգացման մեջ սկսվում է մի նոր, իմաստավորված շրջան։ Զինված ժամանակակից երաժշտական խոր գիտելիքներով, նա իրեն հատուկ հետևողականությամբ, մեթոդիկ կերպով մշակեց մեր պրոֆեսիոնալ նոր երաժշտության զարգացման հիմնական սկզբունքները։ Որպես խոշոր ստեղծագործող ու գիտնական, նա համարձակ ու անվախ պայքարի ելավ հայ երաժշտության ինքնության և ինքնատիպության համար, ամենուրեք ապացուցելով, որ հայերն էլ մյուս քաղաքակիրթ ժողովուրդների նման ունեն իրենց ազգային լիարժեք երաժշտական կուլտուրան, որը հայ ժողովրդի հետ միասին սկիզբ է առնում պատմության խորքերից։

Ժողովրդական երաժշտությունը Կոմիտասի համար հանդիսանում էր հիմնականը, ելակետայինը, ոչ միայն խմբական ու մենեղգային ստեղծագործությունների կերտման, այլև գիտական հետազոտությունների համար։

2

Կոմիտասի երաժշտական դիմանկարի մասին խոսելիս, նրա թողած խորապես ռեալիստական, դասական ժառանգությունը գնահատելիս ամենից առաջ պետք է ընդգծել նրա ստեղծագործությունների պատմական նշանակությունը և կոմպոզիտորական ինքնատիպ անհատականությունը։

Կոմիտասի ստեղծագործական հավատամքը ժողովրդական երգն է։ Ըստ Կոմիտասի ամեն մի ժողովրդի պրոֆեսիոնալ երաժշտություն սկիզբ է առնում ժողովրդական երգից, որը հանդիսանում է այն՝ կենսատու աղբյուրը, որից ծնվում ու կերպավորվում է ազգային պրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործությունը։ Խոր և բազմակողմանի է ժողովրդական երգի բովանդակությունը։ Նրա մեջ արտահայտված են ժողովրդի պատմությունը, խոհերն ու ապրումները, նրա կենցաղը, սովորությունները, հասարակական երևույթները, սոցիալական բախումները, բնությունը, նրա կյանքի ողջ իմաստությունը։ Կոմիտասն իր ստեղծագործական սկզբունքների շատ կողմերով նման է ռուսական ազգային երաժշտության նոր դպրոցի հիմնադիր Մ. Գլինկային։ Նա ասում էր, որ «երաժշտությունը ստեղծում է ժողովուրդը, իսկ մենք՝ կոմպոզիտորներս, միայն հարդարում ենք այն»։

Իսկ Կոմիտասը գրում էր. «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեցեք նրանից»։ Կոմիտասի համար ժողովրդական ստեղծագործությունը, գեղջուկ երգը կենդանի ու հարաճուն երաժշտական կերպարների մի անսպառ շտեմարան էր, որում տեղ են գտնում հայրենի բնությունը և նրա մեջ ապրող ու այդ երգերին ծնունդ տվող աշխատավոր մարդու կյանքը։

«Գեղջուկը բնության հարազատ զավակն է, ուստի ճաշակել է բնությունը բովանդակ հոգով ու սրտով։ Իր երգերուն մեջ բնությունը կխոսի, որովհետև բնությունն է նախ իր մեջ խոսած։ Իր սրտին մեջ բնության ծովը կհուզվի, վասն զի ինքն իսկ բնության ալիքներուն վրա կդեգերի։ Իր երգերն իր կյանքն են, զի իր ամբողջ կյանքը—իր երգերուն մեջն է ներշնչված։ Վերջապես, գեղջուկ երգը տեսակ-տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ-զատ, իրենց ծնունդ առած վայրերուն գիրքը, կլիման, բնությունը ու կյանքը կանդրադարձնեն»[1]։

---

1 ՀՍՍՀ գրականության ու արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ։

Ժողովուրդ և ժողովրդական ստեղծագործություն. ահա այս է Կոմիտասի նշանաբանը։

Կոմիտասի հավաքած ու գրի առած ժողովրդական երգերի մի կարևոր մասը մեզ է հասել «Աղգագրական ժողովածու» խորագրի տակ։ Խստագույն ընտրությամբ այդտեղ զետեղված երգերը, անցնելով Կոմիտասի ստեղծագործական խառնարանով, հետագայում հրապարակ են գալիս արդեն որպես պրոֆեսիոնալ ինքնատիպ գունավորում ստացած, երաժշտական նոր արտահայտչական միջոցներով հարստացած ու նոր բովանդակությամբ հագեցած խորիմաստ ու հուզական կերպարներ դրսևորող բարձրարժեք ստեղծագործություններ, որոնք իրենց մեջ որպես հիմք պարունակում են, այսպես կոչված, աղգագրական տարբերակի նախնական եզրագծերը միայն կամ մայր եղանակը։

Կոմիտասի հասկացողությամբ հայ երաժշտությունը համամարդկային երաժշտական կուլտուրայի մի բաղկացուցիչ մասն է իր աղգային ինքնատիպ առանձնահատկություններով, հետևաբար այդ արվեստը պետք է հասկացվի, ընկալվի բոլոր ունկնդիրների կողմից՝ անկախ նրանց աղգային պատկանելությունից, ճիշտ այնպես, ինչպես բոլորին հասկանալի են համաշխարհային կլասիկների ստեղծագործություններն իրենց համամարդկային բովանդակությամբ և գեղարվեստական ներգործության զորությամբ։

Կոմիտասը հայ երաժշտության մեջ հայտնագործեց բազմաձայնության պոլիֆոնիկ ոճը՝ ելակետ ունենալով ժողովրդական մտածելակերպը և լադային հիմքը, որի վրա ստեղծեց իր ինքնատիպ հարմոնիան, այն դարձնելով ոչ միայն ստեղծագործության բովանդակության ռեալիստական դրսևորման, այլև նրա աղգային կերպարանքը պահպանելու արտահայտչական կարևոր միջոց։

Հրաժարվելով ժողովրդական երգի մինչ այդ գոյություն ունեցած կանոններից, Կոմիտասը, հատկապես իր խմբական ստեղծագործություններում, հոմոֆոն ոճին համարձակորեն հակադրեց հայ երաժշտության համար նորություն հանդիսացող պոլիֆոնիկ ոճը։ Կարևոր է նշել, որ Կոմիտասի պոլիֆոնիան յուրատեսակ աղգային բնույթ ուներ։ Հիմնված լինելով ժողովրդական երաժշտության լադերի վրա։ Ինչպես բուն հարմոնիայի հարցերում, պոլիֆոնիայի ասպարեզում ևս Կոմիտասը ոչ թե ստրկորեն օգտագործում է պատրաստի երաժշտական սխեմաներ ու կանոններ, ոչ թե գոյություն ունեցող պոլիֆոնիկ ոճի ձևերին է ենթարկում ժողովրդական երգը, այլ ժողովրդական երաժշտական օրինաչափություններից և կերպարային բովանդակությունից, լայնորեն վերցրած՝ ժողովրդական ստեղծագործության աղգային բնույթից է բխեցնում իր պոլիֆոնիկ ոճը։ Այսպիսով, նա պոլիֆոնիայի միջոցները ևս ենթարկում և օրգանապես հարմարեցնում է հայկական ժողովրդական երգի հարազատ ոգուն։

Կոմիտասյան ինքնատիպ պոլիֆոնիկ ոճը հատկապես կիրառվել է խմբական ստեղծագործությունների մեջ։ Դրանց թվին է պատկանում աշխատանքային թեմայով գրված «Կալի երգ» հոյակապ վոկալ-երաժշտական պատկերը, որն իր մելոդիկ գրավչությամբ, գաղափարական ու գեղարվեստական խոր հագեցվածությամբ, պոլիֆոնիկ մշակման բացառիկ վարպետությամբ և կոմպոզիցիոն կառուցվածքի ավարտվածությամբ ու արտահայտչականության ներգործոն խորությամբ կարելի է դասել այդ ժանրի համաշխարհային նմուշների շարքը։

Կոմպոզիտորի թողած կլասիկ ժառանգության մեջ նշանակալի տեղ են գրավում լիրիկական ժանրի խմբական ու մեներգային ստեղծագործություն ները։ Այդ բնույթի բազմաթիվ երգերից վերցնենք հանրահայտ «Գարուն ա» վեց ձայնի խմբերգը, որն իր տրամադրությամբ առանձնանում է Կոմիտասի մյուս սիրային-լիրիկական երգերից։ Սա մուրդկային տրամադրության դրամատիկական բարձր լարվածություն պարունակող մի ստեղծագործություն է, որը չնայած իր փոքր ծավալին, պարունակում է ողբերգության հասնող տրամադրություն և խոր հուզականություն։

«Գարուն ա, ձուն ա արել, իմ յարն ինձնից ա սառել»— ժողովրդական այս խորիմաստ տեքստն իր գեղարվեստական համարժեք արտահայտությունն է ստացել նույնքան պարզ, բայց և խորունկ, դրամատիկական հուզականությամբ հագեցած երաժշտական կերպարի մեջ։

Պարտիտուրայի ուսումնասիրությունից երևում է, որ անկախ «Գարուն ա» երգի ինտոնացիոն և ռիթմական պարզությունից, նրա ձայներից յուրաքանչյուրն այնքան ինքնուրույն ու բովանդակալից է, որ ամբողջության մեջ դրանք իսկապես հնչում են որպես խոր հուզմունքով լեցուն մի կատարյալ դրամա, դրսևորելով մարդկային ապրումների մի ամբողջ աշխարհ։ Այս երգը մշակված է նաև մեներգային կատարման համար։ Չխախտելով իր ստեղծագործական սկզբունքը, Կոմիտասը տարբեր արտահայտչական միջոցներ է գործ դնում մեներգային ու խմբերգային մշակումների մեջ՝ մի դեպքում (մեներգային) խուսափելով լադատոնայնական լայնացումից, իսկ մյուս դեպքում (խմբական) ներդաշնակությունը II մասում ժամանակավորապես դուրս բերելով հիմնական լադից։

Կոմիտասյան պոլիֆոնիկ ոճի հիանալի նմուշ է հայրենի բնապատկերը մարմնավորող «Լուսնակն անուշ» խմբերգը (տենորի մենակատարումով), որը նույնպես այդ ժանրի ստեղծագործության փայլուն օրինակն է։ Ընդամենը երեք տակտից բաղկացած (5/2 չափով) այդ իրոք որ «փոքրիկ» երգը զարմանք ու հիացմունք է պատճառում ունկնդրին տրամադրության ամբողջականությամբ։

Կոմիտասը որպես կոմպոզիտոր նույնքան մեծ ու ինքնատիպ է իր մեներգային ստեղծագործությունների մեջ, որոնցից ամեն մեկը որպես թանկագին գոհար զարդարում է հայ կլասիկ երաժշտության գանձարանը։ Դրանք սոցիալական և սիրային-լիրիկական թեմայի երգեր են, որոնցում դրսևորվել են հայ աշխատավոր մարդու, օտար երկնակամարի տակ դեգերող հայ պանդուխտի, հայրենիքի կարոտը սրտում տառապող մարդկանց խոհերն ու ապրումները։

Մեր երաժշտական գրականության այդ ժանրի ամենաբնորոշ, հոգեբանական խորությամբ առանձնապես աչքի ընկնող ստեղծագործություններից է «Անտունին», որի վրա հստակ կերպով դրոշմված է Կոմիտասի ստեղծագործական վառ ու ինքնատիպ անհատականությունը։ Դա մեր ժողովրդի և Կոմիտասի հանճարով կերտված ու զարգացման բարձր կատարելության հասցրված գեղարվեստական մոնումենտալ մի գործ է, որի մեջ պատկերված է նախասովետական շրջանի հայ աշխատավորի հարազատ օջախի ավերմունքը, թշվառությունը, համաժողովրդական վշտի ու ցասման ողբերգության երաժշտա-հնչյունային պատկերը։

Զուր չէր, որ ֆրանսիացի հռչակավոր կոմպոզիտոր Կլոդ Դեբյուսին, լսելով «Անտունին», գրել է. «Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու»։

Բացի էպիկական բնույթի նշանավոր «Մոկաց Միրզան» երգից, որ առանձնահատուկ տեղ է գրավում կոմպոզիտորի ժառանգության մեջ, Կոմիտասի ստեղծագործական դիմանկարին շատ բնորոշ է քնարական երգարվեստը, որը շատ համահնչուն է կոմպոզիտորի խառնվածքին ու մշակման սկզբունքներին։ Ճչացող երաժշտական ոլորտները ընդհանրապես խորթ են նրա արվեստին։ Մեղմ, հոգեպարար երգային լիրիկան, քնքույշ տրամադրություն դրսևորող արտահայտչաձևերը նախընտրելի են Կոմիտասի համար։ Ահա թե ինչու նրա ջերմաշունչ քնարական երգերն իրենց պարզությամբ, անկեղծությամբ ու ներգործուն անմիջականությամբ հոգեբանական խոր ազդեցություն են ունենում ունկնդիրների վրա։ Դրանց թվին է պատկանում «Քելեր ցոլեր», «Քելե քելե», «Զինար ես», «Գարուն ա», «Կուժն առա» և բազմաթիվ այլ գողտրիկ երգեր։

Կոմիտասի ստեղծագործական գիմանկարի բաղկացուցիչ մասն է կազմում այն ժառանգությունը, որը կապված է հայ գրողների խոսքերի վրա գրված երգերի հետ։ Նա երբեմն դիմել է նաև քաղաքային երաժշտության թեմաներին և դրել ստեղծագործություններ, որոնք չեն կարող անտեսվել։ Քաղաքային-հայրենասիրական երգերի թվին են պատկանում «Վայ էն ազգին» (Խ. Աբովյան), «Մայր Արաքսի ափերով» (Ռ. Պատկանյան), «Երազ» (Ս. Շահազիզ), «Ո՞հ ինչ քաղցր» (Մ. Պեշիկթաշլյան), «Թող չերգե բլբուլ», «Հայաստան», «Ծիծեռնակ» և այլն։ Այս բնույթի երգերի մեջ էլ որակական բարձր աստիճանի վրա են գտնվում Կոմիտասի ներդաշնակումները։

Բացի վոկալ ստեղծագործություններից, հայտնի է, որ Կոմիտասը գրել է գործիքային երաժշտություն։ Հրապարակի վրա եղած նրա բացառիկ պրոֆեսիոնալ վարպետությամբ գրված դաշնամուրային վեց պարերը նույնպես աներկբայորեն վկայում են մեծ արվեստագետի խառնվածքին ու ժողովրդական պարեղանակներին հավատարիմ մնալու նրա անխախտ սկզբունքը։

Պատկերը լրիվ դարձնելու համար նշենք, որ մեծ հայրենասեր Կոմիտասը ժամանակին ձեռնամուխ է եղել «Վարդան», «Սասնա ծռեր», «Քաղաքավարության վնասներ» (ըստ Հ. Պարոնյանի) և «Անուշ» օպերաներին։ Վերջին երկուսից որոշ հետքեր մնացել են, իսկ առաջին երկուսից միայն ֆրագմենտար նշումներ։

Կյանքի ողբերգական վախճանը հնարավորություն չտվեց խոհուն արվեստագետին այս բնագավառում նույնպես կատարելու իր սրբազան պարտքը հարազատ ժողովրդի նկատմամբ։

3

Հայ երաժշտական կուլտուրայի համար որքան մեծ ու անգնահատելի է Կոմիտասը որպես ստեղծագործող կոմպոզիտոր, նույնքան արժեքավոր ու համայնապարփակ է նրա գործունեությունը երաժշտագիտության, ազգագրության, հրապարակախոսության, խազային արվեստի և հայ երաժշտության պատմության, տեսության տարբեր պրոբլեմների ուսումնասիրության ու լուսաբանման բնագավառում։

Եթե ստեղծագործության ասպարեզում Կոմիտասը վաղուց արդեն ճանաչված է որպես մեր ազգային կլասիկ երաժշտության հիմնադիրն ու ստեղծողը, ապա հայ երաժշտագիտության, նրա տեսական մտքի նախասովետական շրջանի, երաժշտական ազգագրության ու հրապարակախոսության ամենախոշոր և պայծառ դեմքն է նա։

Կոմիտասը հետազոտող գիտնական էր այս բառի իսկական իմաստով, մանրակրկիտ ու խստապահանջ թե իր և թե ուրիշների նկատմամբ։ Զուր չի ասված, թե նա «մի մոլեռանդ արևելցի էր՝ պատրաստ ամեն նոտայի համար արյուն թափելու»։ Ինչպես ստեղծագործության բնագավառում, այնպես էլ երաժշտական տեսության մեջ Կոմիտասի հիմնական նյութը ժողովրդական երգն է իր բազմերանգ բովանդակությամբ, ինտոնացիոն հարուստ ոլորտով, մետրո-ռիթմիկ հնարավորություններով։

Կոմիտասի արխիվում պահպանված արժեքավոր ձեռագիր ուսումնասիրություններից մեկում պարզորոշ կերպով դրսևորված է նրա վերաբերմունքը ազգային երաժշտության նկատմամբ։ «Ապագա երաժշտության ուսումնասիրության հիմքը,— գրել է նա,— պետք է դառնա ժողովրդական երաժշտությունը (յուրաքանչյուր ազգային երաժշտության համար իր ժողովրդական երգը) ... Ուրեմն ժողովրդական երգի կազմությունը պետք է լավ ուսումնասիրել և ապա դորա հիման վրա հենել գեղարվեստականը»[2] (պրոֆեսիոնալ ստեղծագործությունը)։

Գիտա-հետազոտական աշխատանքի կլասիկ օրինակ է հանդիսանում Կոմիտասի «Լոռու դութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով» նշանավոր ուսումնասիրությունը՝ դութաներգի տեքստի և երաժշտության սպառիչ մեկնաբանությամբ։ Մեր հրաժշտագիտության մեջ դեռևս նմանը չունեցող այդ ուսումնասիրությունն աչքի է ընկնում իր գիտական խորիմաստ ընդհանրացումներով, եղանակի, նրա ձայնաշարի, ամանակի, չափի, կշռի, գույների ու երանգների և այլ մանրամասնությունների գիտական բազմակողմանի վերլուծությամբ։

Կոմիտասի ուսումնասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում պարարվեստին վերաբերող տեսական աշխատությունները։ Սա գտնում է, որ պարը նույնպես արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ նրա բարքը և քաղաքակրթության աստիճանը։ Ըստ Կոմիտասի՝ պարը նույնպես իր պատմական զարգացման ընթացքում ազգային ինքնուրույն կերպարանք է ստանում յուրաքանչյուր ժողովրդի խառնվածքի ու կուլտուրական մակարդակի համեմատ։

«Հայ դեղջուկ պարը» խորագրով արժեքավոր հետազոտության մեջ ուսումնասիրելով հայ շինականի պարի տարբեր տեսակները, նրանց ձևերը, շարման ուղղությունը, չափը, ռիթմը, խորեոգրաֆիկ պատկերը և բազմաթիվ այլ առանձնահատկություններ, Կոմիտասն արել է իր հեղինակավոր եզրակացությունները։ Կոմիտասը պարարվեստը համարում էր մարդկային հասարակության, ժողովրդի կյանքի ու կենցաղի կարևոր կողմերից մեկը. և քանի որ նա սերտորեն առնչվում է երաժշտության հետ, ապա պարի բոլոր բաղկացուցիչ մասերի գիտական բազմակողմանի ուսումնասիրությունը պետք է դրվի իր կոչման բարձրության վրա։

---

2 ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ։

Բացի բուն ժողովրդական երգի ու պարերգանակների ուսումնասիրությունից, Կոմիտասին, որպես հետազոտողի, իր ողջ գործունեության ընթացքում զբաղեցրել է հայ միջնադարյան նոտագրության՝ խաղային արվեստի ուսումնասիրության հարցը։

Նրա արխիվում պահպանված նյութերից ու առանձին պատառիկներից երևում է, որ Կոմիտասն այդ հարցով սկսել է զբաղվել դեռևս էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան եղած ժամանակ։

Երկար տարիներ իր բազում աշխատանքներին զուգընթաց Կոմիտասն ուսումնասիրել և պարզել էր հայկական խաղագրության հիմնական տարրերն ու բաղկացուցիչ մասերը։ Կոմիտասի գործունեության փայլուն էջերից են նրա գիտական դասախոսությունները, հրապարակախոսական ելույթները և հոդվածները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը։

Կոմիտասի ուսումնասիրությունները և գիտական ընդհանրացումները խոշոր արժեք են ներկայացնում ոչ միայն հայ, այլև արևելքի այլ ժողովուրդների երաժշտական կուլտուրայի համար։ Դրանք առանձնապես մեծ ու նշանակալից են քրդական երաժշտության և ֆոլկլորի բնագավառում, որ դեռ իր ժամանակին որպես հայտնություն սենսացիոն նշանակություն ունեցավ Բեռլինի հասարակության և երաժշտական շրջանների համար, երբ Կոմիտասը որպես քննական նյութ ներկայացրեց «Քրդական երաժշտություն» խորագրով իր ուսումնասիրությունը։

Կոմիտասի ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գիտական աղգագրությունը, որն իր բնույթով, ստեղծագործական նորարարությամբ հեղաշրջում կատարեց մեր երաժշտական աղգագրության մեջ՝ կյանքի կոչելով դարերի խորքից մեզ հասած ժողովրդական երգերի հազարավոր թանկագին գոհարներ։

Հայ երաժշտական կուլտուրային Կոմիտասի մատուցած հսկայական ծառայությունը, նրա համայնապարփակ գործունեությունը խոր հետքեր են թողել մեր համերգային-կատարողական, խմբավարական, վոկալ արվեստի և երաժշտական մանկավարժության բնագավառում։

Հնարավորություն չունենալով հանգամանորեն շարադրելու այդ ասպարեզներում թողած նրա ավանդները, որոնցով սերունդներ են դաստիարակվել, նշենք միայն, որ ի դեմս Կոմիտասի վոկալ արվեստը գտել է իր իսկական նորարարին։ Առանձնապես նրա կատարողական-խմբավարական վարպետությունը զարմանք և հիացմունք են առաջացրել այն բոլոր երկրներում ու վայրերում, որտեղ Կոմիտասը հանդես է եկել որպես երգիչ և դիրիժոր-խմբավար։

Հայ և օտար մամուլում կան մասնագետների բազմաթիվ հիացական գնահատականներ, որոնցում խոսվում է Կոմիտասի կախարդիչ ձայնի, երգարվեստի, վոկալ-կատարողական արտակարգ հնարավորությունների, հուզական ներգործուն ուժի և խմբավարական բարձր կուլտուրայի մասին։

Եվրոպացի ականավոր կոմպոզիտորներ և տեսաբան-երաժշտագետներ Կլոդ Դեբյուսին, Ռիխարդ Շմիդտը, Օսկար Ֆլայշերը, Լուի-Լալուան և շատ ուրիշներ բացառիկ երևույթ են համարել Կոմիտասի վարպետությունը այդ բնագավառում։

Կոմիտասն ըստ էության հանդիսանում է նաև հայ վոկալ արվեստի նոր դպրոցի հիմնադիրը, որի հիանալի ավանդներով դաստիարակվել են բազմաթիվ հայ երգիչ-երգչուհիներ և խմբավարներ։

Արվեստագետի մեծությունը որոշվում է մարդկությանը մատուցած նրա ծառայություններով։ Այդ իմաստով բացառիկ է Կոմիտասի երախտիքը։ Նա, որպես բազմերանգ արվեստագետ ու քաղաքացի, մաքուր խղճով և ազնվորեն կատարեց իր պատմական դերը, գալիք սերունդներին թողնելով խորապես մարդկային, հիասքանչ ռեալիստական-դեմոկրատական արվեստ, որը հագեցած է ժողովրդայնությամբ ու բարձր պրոֆեսիոնալիզմով։